ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի յոթ ամսվա ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 15872.6 մլն դրամ՝ պլանավորված 15800.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.5 %-ով կամ 72.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 1.0 %-ով կամ 149.7 մլն դրամով:

Հուլիս ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3025.9 մլն դրամ, պլանավորված 3000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.9 %-ով կամ 25.9 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 3.5 %-ով կամ 102.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 81 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 2 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 29 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 62.9 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 110 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 79-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 9-ը՝ գործունեության չծավալման, 5-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի և 12 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 4 վարչական գործ՝ 13.6 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 2 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 18.4 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 74 վարչական գործով սահմանվել է 1.2 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 380.0 հազ. դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8776 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5940:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 33 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 90 վարձու աշխատողի՝ 14.0 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 50 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության հսկողական գործառույթ իրականացնող մեկ աշխատակից մասնակցել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 327, ելքագրվել՝ 106 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: